ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ «ՆՇԽԱՐՆԵՐ...»-Ի ՀԵՔԻԱԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ*

Անահիտ Աթայան

Բանալի բառեր՝ իրապատում, կենցաղային, հրաշապատում, սոցիալական, հեքիաթներ, արկածային սյուժե, հարուստ կենսափիլիսոփայություն, բարոյախրատական իմաստ, կառուցվածքային առանձնահատկություններ, արժանապատվություն, ջրի հրաշագործուժ, բարոյական բարձր նորմաներ, բանաձևերի խմբավորումներ:

Դարեր շարունակ արցախցին իր ինքնահաստատման համար աշխարհին է պարզել իր պատմությունը, որը վկայել է նրա ինքնարժեքավորումը. ով է ինքը, ինչով է ապրում, ինչ առանձնահատկություններ ունի, ինչ է իրենից ներկայացնում իր մշակույթը, որը մտնում է համամարդկային կարևոր արժեքների մեջ: Այդ արժեքներից անմասն չէ Արցախի ժողովրդական բանահուսությունը, որի գրառման պատմությունը,պետք է սկսել 1960 թվականից: Բահաթրյանները 1960թ. մայիս-օգոստոս ամիսներին Շուշի քաղաքում տեղի և հարևան գյուղերի բնակիչներից գրի են առնում հեքիաթներ, զրույցներ, անեկդոտներ, խաղիկներ: «Առաքել Բահաթրյանը Ներսիսյան դպրոցում պաշտոնավարելիս (1881-1882) արձագանքելով երիտասարդ բանահավաք – հրատարակիչ Տիգրան Նավասարդյանի կոչին, նրան է հանձնում վերոհիշյալ գրառումները: Նավասարդյանը հրատարակում է այդ նյութերի մի մասը, իսկ ողջ ժառանգությունը հրատարակվում է մեր օրերում», - կարդում ենք Ա.Ղազիյանի «Հայ ազգագրություն և բանահյուսություն» գրքում:

Հայ ժողովրդական հեքիաթների հավաքման ու հրատարակման գործում մեծ է Գ.Սրվանձտյանցի, Տ.Նավասարդյանի, Գ.Շերենցի, Եր. Լալայանի և ուրիշների դերը:

Արցախի բանահյուսության պատմության մեջ անգնահատելի է Լ.Հարությունյանի դերը, որը պեղեց, ուսումնասիրեց և հրապարակ հանեց Արցախի բանահյուսության հազարամյա գանձերը՝ իր ծանրակշիռ աշխատություններով նոր աստիճանի բարձրացնելով Արցախի բանահյուսության ուսումնասիրությունը: Լ.Հարությունյանի՝ բանահյուսական աշխատանքի հմտություններն ու ընդհանրացումներ անելու կարողությունը, հետազոտական մտքի հմտությունը հնարավորություն տվեցին պատկերացում կազմելու բանահյուսական այս կամ այն ստեղծագործության բնույթի, ժանրային առանձնահատկությունների, հեղինակային կատարողական վարպետությանմասին: Բոլոր ժանրերի նրա գրառումները ուղեկցվում են բացատրություններով ու ծանոթագրություններով, ուր տեղեկություններեն տրվում ժողովրդական բանասացների տարիքի, սեռի, սոցիալ-կենցաղային միջավայրի, բնավորության, ընդունակությունների, կատարողական արվեստի վերաբերյալ:

Լ. Հարությունյանը իր «Նշխարներ Արցախի բանահուսության» 5 ժողովածուներով դարձավ ոչ միայն բանահյուսական զանազան ժանրերի, այլ նաև ժողովրդի ստեղծած հեքիաթների հայտնաբերող, հրատարակող, դրանց գնահատող ու բնութագրող: Ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությունը վկայում է, որ հեքիաթները աշխա-

---

* Հոդվածն ընդունվել է 15.12.2015:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը:

տավոր ժողովրդի բանավոր ստեղծագործության կարևոր բաժիններից մեկն են: Դրանք հյուսվել են սոցիալական կյանքի, մարդկային բարքի և ժողովրդական կենցաղի ամենաբազմազան երևույթների վերաբերյալ:

Հավաստի աղբյուրները փաստում են, որ մեր պատմիչները բանահյուսական այլ նյութերի հետ միասին հավաքել են նաև հեքիաթներ՝ «առասպելական զրույց», «հին զրույց» անվան տակ:

Բնականաբար հեքիաթի ստեղծողն ու պահպանողը ժողովուրդն է: Ընդունված տեսակետ է, որ հեքիաթը այնպիսի բանահյուսական ժանր է, որի ֆանտաստիկ տարրերը գրեթե չեն կրկնվում բանահյուսական որևէ ուրիշ ժանրում: Սիա թե ինչու ակնհայտ է նրա կապը դիցաբանության հետ: Հեքիաթը հարուստ կենսափիլիսոփայություն է: Ժամանակի կնիքը կրելով իր վրա՝ ունի ազգային կյանքի վառ երանգներ: Հեքիաթները ժողովրդի անկոտրում կամքի, հաստատակամության, ազատասիրական ոգու արտահայտություններն են: Արցախյան հեքիաթները ժողովրդի կյանքի հայելին են, նրա կենցաղի բացահայտողը: Իրենց հարուստ բովանդակությամբ դրանք ուսումնասիրության հետաքրքիր բնագավառ են, և պատահական չէ, որ ազգագրագետը, լեզվաբանը, հնագետը, գրականագետը և այլք առատ նյութ են քաղում հեքիաթներից:

Հեքիաթը յուրահատուկ միջոց է կյանքում լավն ու բարին ուսուցանելու, չարն ու վատը ծաղկելու համար: Հեքիաթները միշտ էլ արտացոլել են ժողովրդի սոցիալ-պատմական կենսափորձը, նրա ակնկալիքներն ու ձգտումները, բնության տարերային ուժերի, ներքին ու արտաքին, աշխարհիկ ու հոգևոր հարստահարիչների դեմ նրա մղած պայքարը, աշխարհայացքը, հավատալիքները, սովորություններն ու բարքերը:

Լ.Հարությունյանի առաջին գրքում տեղադրված իրապատում-արկածային հեքիաթներն աչքի են ընկնում սյուժեների ամբողջականությամբ ու ավարտունությամբ, վիպական մանրամասնությունների առատությամբ, որը, երևի թե, պայմանավորված է բանասացներիանհատական, բնատուր շնորհքով:

Նրագրի առած հեքիաթները բանավոր պատմողական արձակի տեսակներից են: Հեղինակի վկայությամբ՝ Արցախում կային հեքիաթասացներ, ովքեր ձմռան երկար գիշերներին պատմում էին հեքիաթներ: Սավկայում է տվյալ բնակավայրի ազգաբնակչության բանահյուսական ավանդապահության մասին և հավաստում է բանահյուսական ժանրի՝տվյալ ազգագրական գոտում ակտիվ կենցաղավարելու պրոցեսը: Արցախի բանահյուսության մեջ կան հրաշապատումն իրապատում հեքիաթներ՝ իրենց տեսակներով,որոնցում բազմազան ենարծարծված հարցերը:

Լ. Հարությունյանի գրի առած հեքիաթները ավանդական կաղապարի մեջ են իրենց կառուցվածքով՝ համեմված ժողովրդական բառ ու բանով, հնարանքներով, բանաձևերով: Հեղինակը նյութը գրանցել է անմիջականորեն (հիմնականում ասացողից՝ առաջին հաղորդողից, գրի է առել՝ հարազատորեն պահպանելով ասացողի ոճի բոլոր նրբերանգներն ու արտահայտչամիջոցները:

Այսպես՝ «Լվոթունը կորչիլ չի» հեքիաթը պատմել է Միքայել Ղայամյանը (ծնված 1906թ. Աշան գյուղում): Հեքիաթը լսել է իր մորից՝ Մարգարիտ Ղայամյանից: Կան հեքիաթներ, որ գրի են առնվել երկու անգամ: Բանահավաքը բացահայտում է երկու տեքստերի տարբերությունները՝ կապված գործող անձանց անունների հետ: Իսկ «Խորթը» հեքիաթի մասին ծանոթագրություններում նշվում է, որ այն պատմել է Հերիքնազ Օհանյանը՝ ծնված 1867թ: Շուրջ 100-ամյա շնորհաշատ կինը հեքիաթի չափածո տողերը հրամցրել է երգով: Հեքիաթը գրի է առնվել 1963թ. Սպիտակաշեն գյուղում: Հերիքնազն այն լսել է իր հորեղբորորդի Մովսես Սևիկյանից (Աշան գյուղից):

«Նշխարներ…»-ի առաջին հատորի ծանոթագրություններում նշվում է, որ ասացողները անգրագետ կամ կիսագրագետ մարդիկ էին, արհեստավոր, սայլագործ: Լ. Հարությունյանը երբեմն պատմում է նաև բանասացի բնավորության գծերի մասին: Օրինակ՝ «Դադին Հայկա ախպերնա ըլալ, ախպորցը հակեն կուփե չի տվալ, դարդին անգուձ չի կալալ, ուրան վեղան յայմիշա ըլալ, գյանքը քեֆերում անցկացրալ: Բայց ախպերքը Դադուն մննըրներան քցալ չըն, վեր նղվերվալըն, ծեն ըն տվալ՝ հիշ տեղ ըս, այ Դադի, այ Դադի բիդադ».[2]

«Հայ ազգագրություն և բանահյուսություն» գրքում կարդում ենք. «Հեքիաթների կառուցվածքին ծանոթանալիս նկատվում է բանաձևերի 3 խմբավորում. առաջին՝ նախասկիզբ բանաձևեր. մինչև բուն հեքիաթը պատմելը ասացողը օրինաչափորեն ասում է ինչոր բանաձև, այն կարող է լինել տվորական«կեղնի, չեղնի», «ավալ ժամանակով», «խին ժամանակով», «հառեջ ժամանակ» և այլ բազմաթիվ սկիզբ ժամանակաձևեր: Երկրորդ՝ միջին պատմողական բանաձևեր և երրորդ «վերջաբան բանաձևեր»[3]:

Մեջբերում ենք Լ. Հարությունյանի գրի առած հեքիաթների նախասկիզբ բանաձևերից. «Ընում ա, չընում, իրեք ախպեր ըն ընում…», «ըլալ ա, չըլալ, երևի ըլալ ա, վեր ասում ըն, վեր ըլած չինի՝ կասի՞ն…», «Ժուկավ ժամանակավ Արմավիր քաղաքումը մին թաքավեր ար կենում», «Ընում ա, չընում, պա հինչ անում, վեր ընում չի…» և այլն:

Սկիզբ բանաձևերը զգաստացնում են, փորձում ունկնդիրների ուշադրությունը կենտրոնացնել պատմելիք նյութի վրա:

Միջանկյալ բանաձևերը հատուկ աշխուժություն են հաղորդում հեքիաթին, ունկնդիրներին տեղափոխում են դեպքից դեպք: Օրինակ՝ «Թող Թափեղը ըստեղ ավազակ տեռնա, մունք խաբար տանք Սմբաթեն անա», «Թող սահանք քյընին պալատ, թաքավերեն խաբար տանին, մունք տեսնանք, Թափեղը հինչ ա անում…» և այլն: Նման բանաձևերը լսողին ձգում են հեքիաթի մեջ, զգաստ պահում նրանց, իսկ բանասացի խոսքը դառնում է ավելի վստահ, ավելի աշխույժ: Որպեսզի պատմածը տաղտկալի չլինի, հաճախ բանասացը միջամտում է՝ հերոսին բնորոշող արտահայտություններով: Օրինակ՝ «Ծիլկան ասե՝ սարեն ծաղեգ, մին քեչա յոր կօնե, քյինի նի մննե ուշափեն կյումը», «Օշափ ասե՝ սարեն ծաղեգ, կռտելին անումը վեր սկանում ա, օշը հլորում ա, լոք-լոք ընելավ փախճում բդի ծմակը», «Ասելըն ըբաթ լոխ ուշուփնեն եր կացեն…» և այլն:

Վերջաբան բանաձևերը ասես ընդհանրացնում են խոսքը, ասում նաև բանասացի վերաբերմունքը: Օրինակ՝ «Լավ ըն ասալ՝ լվոթուն ըրա, քցի ծովը, ծուկունը վեր գյիդա վուչ, աստուծ կգյիդա», «Երգինքան էլ իրեք խնձոր վեր ընգավ, մինը քաթը ըսողեն, մինն սկընողեն, մինն էլ էն պարի Թափեղեն», «Հու վեր տղու, հարթնու ումեդ ըղնե, էս պոզը նրա աշկը» և այլն:

Սրանք երբեմն օրհնանք - մաղթանքներ են, բարոյախրատական բնույթ են կրում, ստանում են ձևակերպված առած-ասացվածքների տեսք: Հաճախէլհեքիաթները վերածվում են կենցաղային հակիրճ զրույցների: Այդ է վկայում Լ.Հարությունյանի գրի առած «Զրույցներ, առակներ, ավանդություններ» բաժինը:

Կարճ զրույցները ևս դաստիարակչական մեծ նշանակություն ունեն: Վերնագրերը հենց հուշում են բովանդակությունը. «Հու վեր անե, տու օտիս», «Մարթին աշկը մինակ վեղը կքուշտըցընե», «Քյասիբին աշկավը եշի», «Տոնդ քանդվի, պրտքատար» և այլն:

Արցախյան հեքիաթաշտեմարանում տարածված կերպար է հնարագետ, խորամանկ, նույնիսկ բանսարկու ժողովրդի մարդը: Սա միշտ օգնության է հասնում դրական հերոսին, նրան հանում է նեղ վիճակից: Փաստերը վկայում են, որ նման կերպարը տարածված է եղել արևելյան ժողովուրդների բանահյուսական երկերում:

Ղարաբաղի բանահյուսության մեջ օշափը վիշապի ժողովրդահունչ ձևն է: Ըստ Լ.-Հարությունյանի՝ առասպելական կենդանի, թե՛ ջրային, թե՛ ցամաքային, թե՛ անտառային մեծ օձ: Այս կենդանուն Արցախյան ժողովրդական բանահյուսությունը դիմում է «ախպեր» մտերմական բառով՝ «օշափ ախպեր»: Օշափը նաև հեքիաթային հերոս է, առավելապես՝ բարի: «Ղարաբաղյան հեքիաթների մեջ հետաքրքիր կերպավորում ունի նաև վիշապը: Մի անգամ չար ու չարական, այլ դեպքում՝ բարի ու անհիշաչար: Այս երկվությունը հարկավ, կապվում է տարբեր ժամանակաշրջաններում վիշապի նկատմամբ ունեցած պաշտամունքային մտայնության հետ: Առասպելական վիշապի մեջ էլ հասարակ մահկանացուի սիրտ է բաբախում: Նա ոչ թե մտացածին չէ, այլ խիստ իրական է, և լսողը խղճում է նրան: Որոշ հեքիաթներում էլ երկնքից ընկած երեք խնձորներից մեկը տրվում է թշվառ ու ողորմելի օշափին: Առհասարակ ղարաբաղյան հրաշապատում հեքիաթների չարը մարմնավորող հերոսները «մաքուր» չար ու կենսակուլ չեն. նրանց էլ են կիզում մարդկային հոգսերը: Սա հեքիաթը ստեղծող ժողովրդի անթաքույց մարդասիրության արտահայտությունն է», - կարդում ենք Լ.Հարությունյանի «Նշխարներ Արցախի բանահյուսության» գրքում:[4]

«Ծիլկանը» հեքիաթի վերջում Ծիլկանը իր հնարամտություններով շահում է թագավորի սիրտը: Վերջինս ասում է. «Ծիլկան, վերթի, տու համ հընարավ ըս, համ խելունք, համ էլ թամահ չօնիս, ամեն խըթա էլ ծիլըս տամ, պրծընում: Ես էլ պռավալ ըմ, եկ իմ նախշուն ախճիգս քեզ տամ, տեռ էս երգիրիս թաքավեր: Օշափ ախպերն էլ ընի քու ախպորցան մինը, իրեքան մինտեղ քեզ ծառային, բախտդ հաստատ պահին»:[5]

Արցախցին անչափ մարդասեր է, նա փորձում է դարձի բերել չար ուժերին, բարություն սերմանել նրանց հոգիներում:

Օշափի կերպարը տեսնում ենք նաև «Պիճ ապերը» հեքիաթում: Մարդը հաղթում է օշափին: Ժողովուրդն ուզում է ասել, որ հնարամտությամբ կարելի է հաղթել չար ուժերին: Ի դեպ այս հեքիաթում ժողովուրդը քննադատում է քաջնազարականությունը. «օրաս ետ անպենին հվատա, պենվորին հվատաս ուչ: Պճոտունը վեր կա, ամեն հինչա, ետտե -ճելլի աշխարքս ուննական ա»:[6]

Նշված հեքիաթները հագեցված են երկխոսություններով, սյուժեի զարգացումը հետաքրքրաշարժ է, ունկնդրին ստիպում է հետևել գործողությունների ընթացքին: Լ.Հարությունյանը գրքի «Ծանոթագրություններ» բաժնում մանրամասն լուսաբանում է ստեղծագործությունների գրանցման, պատմելու ժամանակաշրջանը, կենցաղավարման հանգամանքները, որտեղ երևում են բանասացների հայացքներն այս կամ այն երևույթի նկատմամբ:

Այսպես. «Սումբաթն ու Թափեղը» հեքիաթը բանահավաքի կողմից առաջին անգամ գրի է առնվել 1957թ.Ստեփանակերտում, գիշվաբնակ Գրիգոր Բաղրյանից (ծնված 1870թ.): Երկրորդ անգամ գրի է առնվել Երևանում, Թալինի շրջանի Մաստարա գյուղի բնակիչ Ալեքսան Սմբատի Բարսեղյանից (ծնված 1918թ.), 1972 թվականին: Վերջինս շնորհալի բանասաց է և հեքիաթը հրապարակվում է հիմնականում նրա պատմածի հիման վրա: Երկու տեքստերի էական տարբերությունը կապված է գլխավոր հերոսի անվանը (առաջին տեքստում՝ Թափեղ, երկրորդում՝ Թափտղը), - կարդում ենք Լ.Հարությունյանի «Ծանոթագրություններում»: [7]

Արցախյան հեքիաթների կարևոր առանձնահատկություններն են պարզությունը, կոնկրետությունը, պատկերավորությունը, բնութագրումների դիպուկությունը, գունագեղությունը:

Բոլոր հեքիաթներում էլ պատկերացում է տրվում կենցաղային որոշ սովորությունների, ծիսական կարգերի, ընտանեկան – կենցաղային հարաբերությունների մասին, բացահայտվում են մարդկանց միջև եղած փոխհարաբերությունները, արցախցու հյուրասիրությունն ու հյուրամեծարությունը, ընտանեսիրությունը, օջախասիրությունը:

Ժողովուրդն իմաստուն է: Նա խորհուրդ է տալիս գործ ունենալ միայն խելոք, բանիմաց ու խոհուն մարդկանց հետ, հեռու մնալ անխելքներից: (Այսպես. «Հու վեր մին տա՝ օխտը կստանա», «Լվոթունը կորչիլ չի» և այլ հեքիաթներում):

Ժողովրդական հեքիաթներում խորհուրդ է տրվում հետևել ուրիշներից ակնկալիք չունեցող, սեփական աշխատանքով ապրող, ջանադիր ու գործունյա, արդար ու ազնիվ, խաբեությամբ չզբաղվող, ուրիշի վաստակը չկողոպտող, ճշմարտասեր ու ճշմարտախոս մարդկանց օրինակին:

Ժողովուրդը կծու հեգնանքով խարազանում է քրտինք թափող, հեշտ վաստակի ետևից ընկած, ձրիակերության սովոր, ծույլ, դատարկապորտ ու անգործունյա, եսամոլ ու շահամոլ, երկերեսանի. կեղծավոր մարդկանց: Ֆոլկլորին, առավել ևս հեքիաթներին, միշտ էլ խորթ է եղել հոռետեսությունը: Իսկ հեքիաթների երգիծական ուղղվածությունը բխում է ժողովրդի կենդանի խոսակցական լեզվի ու ոճի հարուստ շտեմարանից, օրգանապես կապված է վերջինիս հետ և աչքի է ընկնում դիպուկությամբ, սրամիտ լեզվով:

Ակնհայտ է, որ երգիծանքը մեղմ է ու բարեկամական, երբ վերաբերում է հասարակ ժողովրդին, նրանց սովորություններին, բնավորության թույլ գծերին, որոնք կարելի է ուղղել, փոխել, դաստիարակել: Երգիծանքը հեքիաթներում սուր ու խայթող է, երբ վերաբերում է վերնախավին, ժողովրդի հաշվին ապրողներին, կյանքի բացասական երևույթներին:

Ինչպես ամբողջ բանահյուսության մեջ, այնպես էլ հեքիաթներում ջուրը անմահության, երկարակեցության, գերբնական ուժ ունեցող երևույթ է: Պատահական չեն հեքիաթներում հանդիպող աղբյուր, ջրհոր հասկացությունները: Դրանք ուժ են տալիս հերոսին, լցնում են կենսական լիցքով:

«Սումբաթն ու Թափեղը» հեքիաթում դեպքերը տեղի են ունենում Արմավիր քաղաքում: Թագավորը ժառանգ չի ունենում: Գիտուններից մեկը նրան խորհուրդ է տալիս. «Թագավերն ապրած կենա, ժառանգ չօնիս, վեր քզանա ետը մեր երգիրին տրոթուն անե, եր կենանք տյուս կյանք Ըրասխեն փեշկը, դաչանք անինք, փեշկան պաչինք, գուցե մեր հոգսը քաշի:

Քյընում ըն տեսնում Ըրասխեն յրա կնչկյարմուր կապած, կոխկե շամբան էլ մին խխու սաս ա կյամ: Մուտանում ըն տեսնում մին պրզակնը ախպուր, ըխպրին կոխկեն մին ծառ, ծառեն տակեն մին պերուր:

- Աստուծ էս պերուրը մզէտե յա դարկալ:

Թաքավերը ակնեն ճրան խուխեն իրեսավն ա տամ, յոր օնում պուրում պալատը»:[8]

Արաքս գետը եղել է հույսի, հավատի դուռ, ահա թե ինչու նրան են խնդրում հարցը լուծելու համար:

Երեխայի երեսին ջուր ցողելը մեր հինավուրց սովորությունից է (ջրի հրաշագործ ուժը, ջրի պաշտամունքը): Երբ թագուհին խնդրում է Արաքսին, որ իր զավակին եղբայր տա, Աստված պայմանով նրան երեխա է տալիս: Ծնված օրը թագուհին մեռնում է: Սա մեզ հիշեցնում է մեր էպոսի դրվագներից՝ Միհրի և Արմաղանի ժառանգ ունենալու պայմանը:

Ղարաբաղյան հեքիաթներում շեշտվում է ընտանիքի ամրությունը, օջախի սրբությունը:

Որոշ հեքիաթներ բարոյախրատական վերջաբան ունեն: Այսպես. «Լվոթունը կորչիլ չի» հեքիաթում բացահայտվում է մարդու խղճմտանքը, լավություն անելու մարդասիրական տենչը «Մարթին ըրած մին վադությունը, մին լվոթունը աշխարքումս կորչում չի: Լավ ըն ասալ՝ լվոթունն ըրա, քցի ծովը, ծուկունը վեր գյիդա վուչ, Աստուծ կգյիդա»: [9]

Արցախյան հեքիաթներում խորհրդատու են գիտկան պառավները, իմաստուն ծերունիները, խելոք ու հնարամիտ եղբայրները: Իսկ ժողովուրդը սիրում է «պենվուր մարդկանց»: Պատահական չէ, որ հեքիաթներից մեկում Թափեղը հարցնում է ավազակներին, թե ինչով են ապրում, երբ լսում է, որ ապրում են թալանով, Թափեղն ասում է. «Ես ծրգնրհետ էն վախտը կինգրանամ, վեր պենվուր մարդկանց ձերք չտաք: Սկանամ, թա մարթ ըք սպանալ, կլխրնետ կկտրիմ»:[10]

Արցախյան հեքիաթներում հետաքրքիր լուծում ունեն երգիծական հեքիաթները: «Մրթըկընեգ՝ ճոխտն էլ մին խելքու» հեքիաթը նման է Հ.Թումանյանի «Բարիկենդանին»: Ժողովուրդը ծաղրել է միամտությունը, չափից դուրս պարզամտությունը: Կով առնելու համար հավաքած փողը բաժին է դառնում ճարպիկ ստահակին: Երբ ամուսինը տուն է գալիս՝ հաջորդ օրը ըստ պայմանավորվածության կով առնելու գնալու նպատակով, ճարպիկ ստահակը, որը լսել է, թե որտեղ է պահված փողը, գյուղացու կնոջը ներկայանում է, ասելով, թե ամուսինն է ուղարկել փողի ետևից: Խեղճ ու անճար գյուղացին փորձում է գնալ փողի հետևից, սակայն նրա միամտությունը նորից փորձանք է բերում իրեն՝ այս անգամ կորցնելով նաև ծիուն: Հետաքրքիր վերջաբանով ժողովուրդը, այնուամենայնիվ, ողբերգություն չի ստեղծում եղած անհաջողության համար:

- Ադա, ա մարթ, ծի յըս տարալ, պա ծիդ հոր ա:

- Աստուծ ծին դարկալ ա փուլեն կոշտը, ինձ էլ քու կոշտդ:[11]

«Ղազը» հեքիաթը կենցաղային հեքիաթ է, որտեղ քննադատվում է անհյուրընկալությունը: Տանտիրուհու ժլատության պատճառով ընտանիքը զրկվում է եփած սագը վայելելու հաճույքից, իսկ ամուսինը պախարակում կնոջը՝ ասելով.

- Էս քեզ խրեգ ա, ղազը հոր ըս կյեղում ղունաղան, հոր էդ քյալազը կլոխդ կյա: Քեզ խլունքու տեղ տրած, ուրուշու էլ պել ըս գյուդում: Մեենգ իփած ղազը տու վըս է՞, էն տարածը չի: Վեր ամեգըմին թքյա մունք ուտինք, մինն էլ ղոնաղն օտար, փիս կընա՞ր, ղազեն մնանիփվի փիս կնեգյը:

Հյուրասիրությունը ղարաբաղցու կենցաղն է: «Եթե մարդ ինչ-որ պատահարից ազատվել է ժամանակին և հաջողությամբ, ապա դա վերագրվել է հյուրասիրությանը, օտարին, կարիքավորին,մի կտոր հաց տալունե:

Մարդը տխրության, ուրախության պահերին, խաղաղ ու անհանգիստ ժամանակներին պետք է իր ժողովրդի հետ լինի: Այդ կապի սերտացման արդյունք է «ժողովուրթեն հաց տալը»: «Մին թիքա մինակ կեր, մինը ժողովուրթեն նհետ», - կարդում ենք Լ.Հարությունյանի գրքում: [12]

Արցախցին միշտ հավատարիմ է եղել իր մեծավորին, սիրել, պաշտել է թագավորին, նրա մեջ տեսել ժողովրդին սատար լինելու ձգտում, թշվառին, աղքատին օգնելու պատրաստակամություն: Զարմանալիորեն ներողամիտ է թագավորը, նա ընդունում է լավ, հավատարիմ, հնարամիտ ու խելոք մարդուն: Օրինակ՝ «Ծիլկանը» հեքիաթի վերջում ժողովուրդն արտահայտում է իր կամքն ու ցանկությունը.

- Հանց բեդար խելունք խոսկը խելունք կործ տեռնար, ըստծու կիրավը դաստի կդատվար, խելունքը միշտ թաքավեր տեռնար: [13]

Արցախյան հեքիաթներում հաճախ ենք տեսնում կյանքի ու մահվան փիլիսոփայությունը, կյանքի ու մահվան կռվի մեջ կյանքի հաղթանակը:

«Մարը» հեքիաթում մայրը սպասում է իր պանդուխտ որդուն: Երբ հիվանդանում է, մահը գալիս է նրան տանելու, բայց մայրը խնդրում է սպասել, մինչև որդին «դարիբությունից» վերադառնա: Մահը սպասում է: Վերադառնում է մոր որդին, մահը գալիս է նրա ետևից: Մայրը խնդրում է սպասել, մինչև որդին պսակվի… հետո՝ զավակ ունենա, հետո՝ զավակը մեծանա, իր համար ջուր բերի… Մայրը դեռ անելիք ունի այս աշխարհում, չի ուզում գնալմահվան հետ: Բայց վերջինս անխուսափելի է: Մայրը պատրաստվում է մահվան հետ գնալու, բայց վերջին պահին ասում է.

- Մուրազս անկատար մնաց, սրտենս մնաց սրտումս, հացս կուտուր տեռած ըմ քյընում, աստուծ լավ անգուձ կալ:

Մարդ միշտ էլ կարոտ է մնում կյանքին, միշտ էլ աշխարհում անելիք ունի ու երբեք իր գործն ավարտած չի համարում:

«Կաթնակորեկ» ժողովածուի «Մայրը» հեքիաթի վերջաբանը փոքր-ինչ տարբեր է: Մահը, տեսնելով, որ անկարող է հաղթել մայրական կարոտին, շրջվում է գլխահակ:

- Ապրիր, որքան սիրտդ կուզի, կարոտած մայր, - շշնջաց հաղթված մահը: Այսպիսի վերջաբանը ժողովրդի ցանկությունն է, մարդու իղձը՝ ապրելու, այս կյանքում մնալու համար, քանի որ կյանքի կարոտը հավերժական է:

Ժողովրդական իմաստությունն է «Պոզը» հեքիաթի հիմքում: Անտեր, անտիրական ծերունին իր չունեցած ոսկով գայթակղում է զավակներին, ովքեր թողել են հայրենի օջախը, ու բոլորովին տիրություն չեն անում ծերունի հորը: Հարևանի խորհրդով ծերունին տարածում է, որ մի պուլիկ ոսկի ունի: Հարստության պատճառով տղաները գյուղ են գալիս, յուրաքանչյուրը փորձում է շահել հոր սիրտը, որպեսզի ինքը տիրանա հարստությանը:

Հայրը մեռնում է: Տղաները հարևանից հարցնում են ոսկու տեղը: Երբ բացում են պուլիկը, նրա մեջ գտնում են մի պոզ, մեջն էլ մի թղթի կտոր, որտեղ մեծ-մեծ տառերով գրված էր. «Հու վեր տղու, հարթնու ումեդ ըղնե, էս պոզը նրա աշկը»: Ժողովուրդը քննադատում է ապերախտ ու երախտամոռ երեխաներին: «Նշխարներ Արցախի բանահյուսության» ժողովածուի երրորդ գրքի «Երկու խոսք» բաժնում Լ.Հարությունյանը գրում է.

-Իր լեզվական, բանահյուսական անսպառ հարստությամբ, մարդկային քաղաքակիրթ ու լայնասիրտ սովորություններով, մտքերի խորությամբ և իմաստնությամբ, ստեղծելու, ստեղծագործելու բնական պահանջով ու լուսասիրությամբ, հույսով, հավատով ու հավատալիքներով, ազնվությամբ, բարությամբ, ծայր ուղղամտությամբ ու մանկամտությամբ… Այսպես է ներկայանում արցախցի հայը իմ ազգագրական հավաքածուներում: [14]

Այսպես է ներկայանում արցախցին նաև հեքիաթներում, որոնց բոլոր տեսակներն էլ տոգորված են հույսով, հավատով, մարդկային գեղեցիկի, վեհի, վսեմի պաշտամունքով:

«Աշխարհը խորթ է» հեքիաթը իրապատում և հրաշապատում տարրերի խառնուրդ է: Խորթ մորից հալածված Արամենը փորձում է աշխարհում գտնել գութ, սեր, բարություն, խիղճ, սակայն չի գտնում: Հանդիպում է անողոք, սուր կռող երկաթագործին, անխիղճ մսագործին, դիակապտությամբ զբաղվող մարդուն:

-Աստված իմ, ինչ անի խեղճ Արամենը, որ խորթ մորից ճողոպրելով կրկնակի խորթություն տեսավ մարդկանցից: Միթե այս ծաղկառատ աշխարհը նրա համար է միայն, որ արնոտ դանակները սրվեն: Մսագործի սիրտը արյունով է լվացվում, Արամենը ինչպես գութ աղերսի նրանից: Ինչ մահու տամ գլուխս, որ ազատվեմ անաստված դիակապուտներից: Աստված իմ, բարի Աստված: Արամենը հայացքը հառեց ներքև. դեմը կանգնած էր մի բարեհամբույր պառավ, որի հայացքից լիաբաշխ թախիծ էր մաղվում:

- Նանի, իմ անչար նանի…

Բայց չքացավ նանին, իր տեղում թողնելով մի ճյուղատարած խնձորենի ծառ՝ լիքը կարմրաթուշ խնձորներով, ճառագած դեղնակարմիր ծիածանով: Իսկ գետնի տակից լսվեց մի խուլ ձայն. «Ապավինիր խնձորենուն, նա քո տատիկն է և եղիր տոկուն»:[15]

Հետաքրքիր վերջաբան ունի հեքիաթը. «Մեկն ասում է, որ Արամենը շարունակում է փնտրել և դեռևս նրան չի հաջողվել հանդիպել բարի մարդու, սեր տալ, սեր առնել, խիղճ տալ, խիղճ ստանալ, Իսկ մյուսն ասում է, որ նա ծուլվել է այն խնձորենուն և կարմիր խնձորով է իր վիշտը հայտնում աշխարհին»:[16]

Այսպես՝ մարդը անընդհատ փնտրում է՝ գեղեցիկը գտնելու հույսով:

Արցախյան հեքիաթների դրական հերոսների միակ հզոր զենքը միայն ուժը չէ: Ուժը բավական չէ հաջողության հասնելու համար: Ուժի հետ նաև խելք է պետք, նրանք օժտված են մտավոր ու հոգևոր կարողությամբ, ազնիվ են, ճշմարտախոս, անձնուրաց են, պատրաստակամ՝ օգնելու դիմացինին, ծանր վիճակում հայտնվածին: Նրանք նաև նպատակամետ են, սիրում են իրենց ծնողներին, ընկերներին ու հարազատներին: Այդ են վկայում «Ծիլկանը», «Պիճ ախպերը», «Սումբաթն ու Թափեղը» և այլ հեքիաթներ:

Ընտանեկան կյանքի բարձր բարոյականությունն է ընկած Լ.Հարությունյանի գրի առած հեքիաթներում:

«Դեռևս հազարամյակների հեռվից, մարդու մեջ զանազանվել է երկու գեղեցկություն՝ ներքին (հոգեկան) և արտաքին (պատկերային): Երկրորդը փայլ է, խաբուսիկ: Եթե չկա առաջինը» նա արագ անէանում է և հակառակ զգացողությունը պատճառում մարդուն»:

«Ղշնգոթունը սարու ծյուն ա, սարը բդի դաշանգ: Համ էլ՝ դաշանգն ասում ա՝ ինձ հռնանցե եշի», - կարդում ենք Լ.Հարությունյանի նշխարներում: [17] Ամուսնական հարցի լուծումը դժվար խնդիր է: Ահա թե ինչու հեքիաթներում ժողովուրդը փորձել է ճակատագրական դաշինքի մեջ բացառել պատահականությունները: «Մուկունը և տռռոնը» հեքիաթում մուկը սիրահարվում է տռռոնին: Նրանք որոշում են ամուսնանալ: Մուկը համբուրում է տռռոնին, վերջինս ամոթից կարմրում է, բայց և մկան բնի մոտ սպասում փեսացուին: Սակայն մուկը չի գալիս. «էնքան ա եշում, մինչև ումեղը կտրում ա: Ասում ա. իմ դանգլա խելքս, ամեն պաչու կիավատա՞ն, վեր ես հըվըտացե»: Սա բարոյական վեհագույն արժեքի գովք է: Ամուր պիտի լինի սերը, ընտանիքը, որ ամեն պատահական երևույթից չփլուզվի:

Արցախյան ամեն մի սովորություն կապվել է նրա բարձր արժանապատվության ու բարոյականության հետ: Հասարակական կյանքի յուրաքանչյուր բնագավառ արցախցուն թելադրել է իր ապրելու արվեստը, կանոնարկված օրենքը՝ կապված պատվի, պատվախնդրության, օջախասիրության հետ:

Ղարաբաղյան բարոյականությամբ է շնչում արցախյան հեքիաթը: Հայ ընտանիքը՝ իր սովորություններով ու նորմերով հենց արցախցու կենսագործունեության հիմքն է: Սերն է արցախցու բարոյականության հիմքը: «Այն ինքն իրեն կգա: Կգա մանկան ճիչերով, հարսի ամոթխածությամբ, բարեկամությամբ, ամուսնական մահճի նկատմամբ պարտականության չգրված օրենքով»:

«Վեչ փիս ախչիգայ տեսի, վեչ՝ լավ կնեգ»: «Վեչ անվալ ախճիգայ տեսե, վեչ դաշանգայ հարթը»: Սխա՞լ է այս փիլիսոփայությունը… բայց բարոյական է և նրա օգտին են վկայությունները», - գրում է Լ.Հարությունյանը: [18]

Բարձր է արցախյան հեքիաթների բարոյախոսական-գաղափարական նպատակադրումը: Դրանք նպաստում են մարդու հոգևոր և մտավոր զարգացմանը:

«Խելոք ու ողջամիտ են մեզ ավանդված հեքիաթները, զրույցները, ավանդությունները…

Նրանք նաև լեռնային աղբրաջրի պես մաքուր են, թափանցիկ ու պարզ, բազմաբնույթ ու բազմախոխոջ»…, - ահա վաստակաշատ բանագետի ընդհանրացումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ղազիյան Ա., «Հայ ազգագրություն և բանահյուսություն», Եր., 1983, էջ 5:
2. Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Եր., 1991, էջ 385:
3. Ղազիյան, Ա. նշվ. աշխ., էջ 14:
4. Հարությունյան Լ., նշվ. աշխ., էջ 10:
5. Նույն տեղում, էջ 28:
6. Նույն տեղում, էջ 34:
7. Նույն տեղում, էջ 382:
8. Նույն տեղում:
9. Նույն տեղում, էջ 37:
10. Նույն տեղում, էջ 41:
11. Նույն տեղում, էջ 56:
12. Նույն տեղում, էջ 21:
13. Նույն տեղում, էջ 28:
14. Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, հատոր 3, Ստեփ., 2007, էջ 4:
15. Կաթնակորեկ, Եր., 1998, էջ 56:
16. Նույն տեղում, էջ 56:
17. Նույն տեղում, էջ 18:
18. Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, 1991, էջ 17:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Լ. Հարությունյանի «Նշխարներ…» -ի հեքիաթային աշխարհը

Անահիտ Աթայան

«Լ. Հարությունյանի «Նշխարներ…»- ի հեքիաթային աշխարհը» հոդվածում բացահայտվում է Լ. Հարությունյանի դերը արցախյան հեքիաթների հավաքման, գրառման բնագավառում, մատնանշվում նրանց ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունները, ճանաչողական և դաստիարակչական նշանակությունը: Լ. Հարությունյանի հեքիաթներն արտացոլում են ժողովրդի սոցիալ-պատմական կենսափորձը, նրա ձգտումներն ու սպասումները, առանձնանում են իրենց սյուժետային առանձնահատկություններով, բանաձևերի երեք խմբավորումների կիրառությամբ: Բերված են համապատասխան օրինակներ, որոնք վկայում են Լ. Հարությունյանի դերը արցախյան հեքիաթների հավաքման, գրառման և դասդասման բնագավառում:

РЕЗЮМЕ
“Сказочный мир “Реликвий…” Л. Арутюняна
Анаит Атаян

Ключевые слова: *реальные, волшебные, бытовые, социальные сказки, приключенческий сюжет, богатая жизненная философия, нравоучительный смысл, структурные особенности, достоинство, волшебная сила воды, высокие моральные нормы, группировка формул.*

В статье «Сказочный мир «Реликвий…» Л. Арутюняна раскрывается важность роли Л. Арутюняна в области сбора, записи сказок, отмечаются их жанровые и структурные особенности, ознакомительные и воспитательные значения. Сказки Л. Арутюняна отражают социально-исторический опыт народа, его ожидания и стремления, выделяются своими сюжетными особенностями, с использованием всех трех групп формулировок. Приведены соответствующие примеры, которые свидетельствуют о роли Л.Арутюняна в области сбора, записи, классификации арцахских сказок.

SUMMARY
“The Fairy World” article of L.Harutyunyan's "Relics"
Anahit Atayan

Keywords: *real story, householding, legend, social, fairytale, adventurous plot, rich philosophy of life, moral and ethical sense, structural features, dignity, the wonderful power of water, high moral norms, grouping of formulas.*

The article “Fairy World" of L.Harutyunyan's "Relics" reveals Harutyunyan's role in the collection of Artsakhi fairytales, underlining genre and structural features, cognitive and educational significance. L. Harutyunyan's fairytales reflect nation's social and historical life experience, its aspirations and expectations. They are known for their narrative features and application of three groups of formulas. Relevant examples are brought which prove Harutyunyan's role in the collection of Artsakhi fairytales in the sphere of recording and classifying.